ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025 թվականի
Սեպտեմբերի 10-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1.«Պատմության փիլիսոփայության և տեսության» և «Հանրային գործընթացների հոգեբանական ուսումնասիրությունների» լաբորատորիաների հաշվետվություն /զեկ. ՝ լաբ. ղեկ. Դավիթ Մոսինյան, Սոնա Մանուսյան/

2. Հայցորդության ձևակերպման համար ղեկավարի և թեմայի հաստատում։

3. «Բան ու Գործ» ԵՊՀ էքսպո-2025-ի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում։

4. Ուսումնական գործընթացների կազմակերպման աշխատանքները ֆակուլտետում.

ա/ մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների և ղեկավարների գրանցում,

բ/ քննաշրջանի ամփոփում,

գ/ դասալսումների կազմակերպման ժամանակացույցի կազմում,

դ/ e-learning համակարգում դասընթացների պլանների, գրականության ցանկի, համապատասխան նյութերի տեղադրում։

5. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում։

6. Պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցանկի հաստատում։

7. Ասպիրանտի ղեկավարման թույլտվության երաշխավորման հարց /դոց. Դավիթ Մոսինյան/

8. Ընթացիկ հարցեր։

1. Ա.Բաղդասարյանը խոսք տվեց հեռավար լաբորատորիայի ղեկավարներին՝ Դավիթ Մոսինյանին և Սոնա Մանուսյանին։ Նրանք ներկայացրեցին «Պատմության

փիլիսոփայության և տեսության» և «Հանրային գործընթացների հոգեբանական ուսումնասիրությունների» լաբորատորիաների հաշվետվությունները։ Ընթացքում եղան հարցեր և պատասխաններ։ Ֆակուլտետի խորհուրդը հաստատեց հաշվետվությունները։

2. Հայցորդության ձևակերպման համար ղեկավարի և թեմայի հաստատում։

Ա.Բաղդասարյանը տեղեկացրեց նոր հայցորդների և ասպիրանտների համար, որ հայտը անհրաժեշտ է ներկայացնել մինչև հոկտեմբերի 20-ը։ Նա նշեց նաև այն փաստը, որ ավելացել է դիմորդների թիվը։

3. «Բան ու Գործ» ԵՊՀ էքսպո-2025-ի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում։

Ա.Բաղդասարյանը նշեց, որ այս տարի միջոցառման պատասխանատուն Դ.Սարգսյանն է։ Բավականին աշխատանքներ են տարվել և տարվում, կապված միջոցառման հետ։ Սակայն հավելեց, որ ունենք 5 ամբիոն և հաջորդ տարիներին պատասխանատուները կլինեն այդ ամբիոններից ըստ հերթականության։

4. Ն.Ալավերդյանը ներկայացրեց ուսումնական գործընթացների կազմակերպման աշխատանքները ֆակուլտետում.

ա/ մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների և ղեկավարների գրանցում՝ ժամկետը մինչև սեպտեմբերի 15,

բ/ քննաշրջանի ամփոփում,

գ/ դասալսումների կազմակերպման ժամանակացույց,

դ/ e-learning համակարգում դասընթացների պլանների, գրականության ցանկի, համապատասխան նյութերի տեղադրում։

5. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում։

Բոլոր հայցորդները և ասպիրանտները ատեստավորվեցին։

6. Հաստատվեց պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցանկը։

7. Ասպիրանտի ղեկավարման թույլտվության երաշխավորման հարց /դոց. Դավիթ Մոսինյան/

Ֆակուլտետի գիտխորհուրդը երաշխավորեց դոց. Դավիթ Մոսինյանը հայտը։

8. Ընթացիկ հարցեր։

Ն.Ալավերդյանը նշեց, որ անվանական կրթաթոշակները հատկացվել են 4-րդ կուրսեցիներին։ Փիլիսոփայության բաժնից՝Հայրապետյան Իշխանին, հոգեբանության բաժնից՝Սոնա Հայցյանին։

Քննարկվեց նաև ֆակուլտետի գիտխորհրդի ընդլայնման հարցը։ Խորհուրդի կազմը կհամալարվի հոգեբաններից՝Ա.Լոքյան, փիլիսոփաներից՝ Կ.Յարալյան։

Մյասնիկ Սահակյանին բացակայության ժամանակահատվածում կփոխարինի Ս. Հայցյանը։

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ.Պապոյան